ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 02.12.2019թ.
ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,

գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
- ՀՀ ՋՈՒ ԻԶՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան,

Բացակայում է՝
- ՀՀ ՋՈՒ ԻԶՎ ՌԱ բաժնի պետ, գնդապետ Ն. Գևորգյան,

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակցի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Քանի որ 27.11.2019թ. ստացված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունենի, ինչպես նաև հրավերով «Տիպանասական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմաններն առկա են, ուստի հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

1.2 02.12.2019թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված **գնահատման թերթիկները**, հանձնաժողովը որոշեց մասնակցի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակիցներ:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-20-20/2» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳԳՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Յու. Եսայան

Գնումները համակարգող Ա. Հովհաննիսյան